Հովհաննես Թումանյան

Վայրէջք

Քառասուն տարի բրոնած ճանապարհ՝
Շիտակ, անվեհեր
Գընում եմ ես վեր
Դեպի Անհայտը սուրբ, աշխարհքը պայծառ:

Քառասուն տարի ճամփովն ահարկու
Անցել եմ էսպես
Ու հասել եմ ես,
Խաղաղությանն եմ հասել ես հոգու:

Թողել եմ ներքև, մեծ լերան տակին,

Ե՛վ փառքը, և՛ գանձ,
Ե՛վ քեն, և՛ նախանձ
Ամենը, ինչ որ ճընշում է հոգին:

Եվ էն ամենը, արդ նայում եմ ես
Տեսնում եմ նորից

Իմ լերան ծերից
Էնպես հասարա՞կ, դատարկ են էնպե՛ս...

Եվ ես իմաստուն ու բեռըս թեթև,
Անհոգ ծիծաղով,
Երգով ու տաղով

Իջնում եմ զրվարթ իմ լերան ետև:

1909